2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հունվար, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 5

2025 ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 11

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ 14

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 14

ՀԱՎԵԼՎԱԾ 1. 2026 թվականի ԿՓ առնչություն ունեցող ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների և ուղղությունների 15

ՀԱՎԵԼՎԱԾ 2. 2026 թվականի ԿՓ առնչություն ունեցող ծախսերի նշագրման շրջանակը (տվյալների բազան) 16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԿԲՆ	Կլիմայական բյուջետային ծախսերի նշագրում
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԾ	Կլիմայական ծախսեր
ԿՓ	Կլիմայի փոփոխություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՖԿ	Հանրային ֆինանսների կառավարում
ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագիր
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՋԳ	Ջերմոցայային գազեր
ՎԱ	Վարչապետի աշխատակազմ
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության խնդիրների արդյունավետ հասցեագրումը պահանջում է դրանց համակարգային ինտեգրում հանրային ֆինանսների կառավարման (ՀՖԿ) գործընթացներում, մասնավորապես՝ պետական բյուջետավորման շրջանակում: Այս համատեքստում կլիմայական հանրային ծախսերի նույնականացումը, գնահատումը և վերլուծությունը կարևոր գործիք են՝ պետական քաղաքականությունների կլիմայական ուղղվածությունն ու ազդեցությունը հասկանալու և ապագա որոշումների կայացման համար:

Հայաստանում կլիմայական բյուջետային ծախսերի նշագրման (ԿԲՆ) գործընթացը պետական մարմինների կողմից առաջին անգամ փորձարկվել է 2025 թվականին՝ սահմանափակ շրջանակով: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) «Կլիմայական խոստում Հայաստան. խոստումից ազդեցություն» ծրագրի շրջանակներում մշակվել է կլիմայական բյուջետային ծախսերի նշագրման և դրա կիրարկման ուղեցույցը, որը փորձարկվել է 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենքի հիման վրա՝ ՀՀ ընտրված պետական մարմիններում: Վերջիններս հանդիսանում են կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության քաղաքականությունների մշակման և/կամ իրականացման առանցքային դերակատարներ:

2026 թվականին ԿԲՆ գործընթացը տեղափոխվել է որակապես նոր մակարդակ. այն արդեն ամբողջությամբ կիրառվել է 2026 թվականի պետական բյուջեի բոլոր ծրագրերի նկատմամբ: Սա նշանակում է, որ կլիմայական նշագրման և վերլուծության շրջանակում ընդգրկվել են բոլոր պետական մարմինների բյուջետային ծախսերը՝ ապահովելով համապարփակ մոտեցում և հնարավորություն ընձեռելով գնահատելու պետական բյուջեի ընդհանուր ներդրումը կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության նպատակների իրականացման գործում:

Սույն «2026 թվականի պետական բյուջեի կլիմայական ծախսերի վերլուծությունը» պատրաստվել է ՄԱԶԾ-ի «Կլիմայական խոստում Հայաստան. խոստումից ազդեցություն» և «Ռիսկերի գնահատման տեխնիկական ուղեցույցների մշակում՝ կորուստներին և վնասներին արձագանքելու կառավարման մոտեցումների համար» ծրագրերի ֆինանսական աջակցությամբ, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի (ՏԶՀԿ) խորհրդատվական մասնակցությամբ: Վերլուծությունը նպատակ ունի ներկայացնել 2026 թվականի պետական բյուջեի կլիմայական ուղղվածությունը և բացահայտել հիմնական միտումները:

2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2026 թվականին պետական բյուջեի ծախսերը կազմում են 3,627.6 մլրդ դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել թվով 172 բյուջետային ծրագիր կամ 797 բյուջետային միջոցառումներ:

Համաձայն ԿԲՆ արդյունքների, նշագրված 797 բյուջետային միջոցառումներից կլիմայի փոփոխությանն (ԿՓ) առնչվող են 173-ը, որոնցից 34-ը մեկնարկել են 2026 թվականին: Կլիմայի փոփոխությանն առնչվող բյուջետային ծախսերը (կլիմայական ծախսերը) կազմում են ընդամենը բյուջետային ծախսերի 5.2 տոկոսը կամ 189.0 մլրդ դրամ:

Գծապատկեր 1. 2026 թվականի կլիմայական ծախսերի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում



Գծապատկեր 2. 2026 թվականի ԿՓ առնչվող բյուջետային միջոցառումների կշիռը ընդամենը բյուջետային միջոցառումներում



Աղբյուրը՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏԶՀԿ հաշվարկներ

ԿԲՆ արդյունքները ցույց են տալիս, որ կլիմայական միջոցառումների իրականացումը բնութագրվում է գերատեսչական կենտրոնացմամբ. գերակշիռ մասը իրականացվում է սահմանափակ թվով գերատեսչությունների բյուջետային ծրագրերի շրջանակներում: Այսպես, կլիմայի փոփոխությանն առնչվող 173 բյուջետային միջոցառումները իրականացվում են 9 պետական մարմինների կողմից:

Կլիմայական միջոցառումները և ծախսերը հիմնականում կենտրոնացած են ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի և գյուղատնտեսության ոլորտներում, իսկ սոցիալական, առողջապահական և անվտանգության ոլորտներում կլիմայական բաղադրիչն ունի համեմատաբար սահմանափակ ընդգրկում: Սա արտացոլում է, որ կլիմայական բյուջետային ծախսերի ներկա կառուցվածքում առաջնահերթ են համարվում ֆիզիկական ենթակառուցվածքներին, բնական ռեսուրսների կառավարմանը և գյուղատնտեսական գործունեությանն առնչվող միջամտությունները:

Միջոցառումների թվով ամենամեծ մասնակցություն ունեն չորս գերատեսչություններ, որոնց բաժին է ընկնում ԿՓ առնչվող միջոցառումների 89 տոկոսը: Մասնավորապես, 77

միջոցառում իրականացվում է ՀՀ ՏԿԵՆ, 34 միջոցառում՝ ՀՀ ԷՆ, 26 միջոցառում՝ ՀՀ ՇՄՆ և 17 միջոցառում՝ ՀՀ ԿԳՄՍՆ բյուջետային ծրագրերի շրջանակներում:

Կլիմայական միջոցառումների տեսակարար կշիռը գերատեսչությունների միջոցառումների ընդհանուր թվի մեջ տատանվում է 1.1 տոկոսից մինչև 100 տոկոս: Միևնույն ժամանակ, կլիմայական ծախսերի կշիռը գերատեսչությունների ընդհանուր ծախսերում առավել բարձր է ՀՀ ՇՄՆ դեպքում՝ ծախսերի 87.2 տոկոսը: Մյուս գերատեսչությունների դեպքում այն չի գերազանցում 29.4 տոկոսը:

Աղյուսակ 1. ԿԲՆ ամփոփ ցուցանիշներ

Պետական մարմին	ԿՓ առնչվող միջոցառումների քանակ	Կշիռը պետական մարմնի միջոցառումների թվում	ԿՓ առնչվող ծախսեր, մլն դրամ	Կշիռը պետական մարմնի ընդամենը ծախսերում, տոկոս	Կշիռը ընդամենը կլիմայական ծախսերում, տոկոս
ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	26	100.0	13,686.5	87.2	7.2
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	77	76.2	94,030.9	29.0	49.7
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	34	50.7	21,904.9	29.4	11.6
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	17	8.0	22,700.8	5.4	12.0
ՀՀ առողջապահության նախարարություն	7	16.3	26,034.3	12.3	13.8
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	7	46.7	1,324.3	1.0	0.7
ՀՀ ներքին գործերի նախարարություն	3	13.0	9,227.1	9.0	4.9
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	1	1.1	97.7	0.0	0.1
ՀՀ պաշտպանության նախարարություն	1	9.1	4.6	0.0	0.0
Ընդամենը	**173**	**21.7**	**189,011.1**	**5.2**	**100.0**

Աղբյուրը՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏԶՀԿ հաշվարկներ

Կլիմայական ծախսերի գերակշիռ մասը նույնպես կենտրոնացած է սահմանափակ թվով գերատեսչությունների շրջանակում: Ամենամեծ ծավալն ապահովում է ՀՀ ՏԿԵՆ-ը՝ 94.0 մլրդ դրամ կամ կլիմայական ծախսերի 49.7 տոկոսը, հաջորդում են ՀՀ ԱՆ-ն՝ 26.0 մլրդ դրամ կամ ծախսերի 13.8 տոկոսը, ՀՀ ԿԳՄՍՆ-ն՝ 22.7 մլրդ դրամ կամ ծախսերի 12.0 տոկոսը, ՀՀ ԷՆ-ն՝ 21.9 մլրդ դրամ կամ 11.6 տոկոսը, և ՀՀ ՇՄՆ-ն՝ 13.7 մլրդ դրամ կամ 7.2 տոկոսը: Մնացած չորս գերատեսչությունների կլիմայական ծախսերի համախառն ծավալը կազմում է մոտ 10.7 մլրդ դրամ, իսկ համախառն բաժինը՝ 5.6 տոկոս:

Գծապատկեր 3. 2026 թվականի կլիմայական ծախսերի կառուցվածքն ըստ պետական մարմինների, տոկոս



Գծապատկեր 4. 2026 կլիմայական ծախսերի կշիռը պետական մարմնի ընդամենը ծախսերում, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏԶՀԿ հաշվարկներ

Բյուջետային միջոցառումները՝ ըստ կլիմայի փոփոխությանն արձագանքման ուղղությունների[1] դասակարգվում են հետևյալ երկու խմբերում.

- **Մեղմման միջոցառումներ** - որոնք նպաստում են մթնոլորտում ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների կրճատմանը կամ ՋԳ կլանման ընդլայնմանը
- **Հարմարվողականության միջոցառումներ** - որոնք ուղղված են նվազեցնելու ԿՓ հետևանքների և կլիմային առնչվող ռիսկերի նկատմամբ մարդու կամ բնական համակարգերի խոցելիությունը՝ պահպանելով կամ բարձրացնելով ԿՓ հետևանքներին հարմարվելու և դիմակայելու կարողությունները:

2026 թվականին կլիմայական բյուջետային ծախսերի մեծ մասը ուղղված է կլիմայի փոփոխության հարմարվողականությանը՝ 139.1 մլրդ դրամ կամ կլիմայական ծախսերի 73.6 տոկոսը (122 միջոցառում), իսկ մեղմման միջոցառումներին ուղղված է 49.9 մլրդ դրամ կամ 26.4 տոկոսը (51 միջոցառում):

Գծապատկեր 5. 2026 թվականի կլիմայական ծախսերն ըստ կլիմայի փոփոխությանն արձագանքման ուղղությունների



Աղբյուրը՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏԶՀԿ հաշվարկներ

[1] «Կլմայական ծախսերի նշագրման ուղեցույց», Երևան, 2024թ.

Մեղմման միջոցառումների հիմնական մասն իրականացվում է ՏԿԵՆ և ԿԳՄՍՆ բյուջետային ծրագրերի շրջանակներում (համապատասխանաբար 45.5 և 45.4 տոկոս), իսկ հարմարվողականության ոլորտում գերակշռող են ՏԿԵՆ (51.3 տոկոս), ԱՆ (17.7 տոկոս), ԷՆ (15.4 տոկոս), ՇՄՆ (9.1 տոկոս) և ՆԳՆ (6.6 տոկոս) միջոցառումները:

Գծապատկեր 6. 2026 թվականի կլիմայական ծախսերն ըստ կլիմայի փոփոխությանն արձագանքման ուղղությունների



Աղբյուրը՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏԶՀԿ հաշվարկներ

Կլիմայի փոփոխության մեղմման ծախսերի գերակշիռ մասը՝ 80.9 տոկոսը, ուղղված է կառուցված միջավայր ոլորտին, ներառելով էներգախնայողության և էներգաարդյունավետության ստանդարտներին համապատասխանող նոր կառուցվող և վերակառուցվող շինություններ, ինչպես նաև արևային վահանակների տեղադրում: Տրանսպորտի ոլորտը հաջորդում է իր ծավալով՝ կազմելով 8.6 տոկոս, ինչը ներառում է Երևանի մետրոպոլիտենի և Հարավկովկասյան երկաթուղու հետ առնչվող ծախսերը: Ծախսերի այս ոլորտային բաշխումը հիմնված է կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գործողությունների տիպաբանության վրա[2]:

Գծապատկեր 7. ԿՓ մեղմման ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏԶՀԿ հաշվարկներ

[2] Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գործողությունների տիպաբանությունը ներկայացված է Կլմայական ծախսերի նշագրման ուղեցույցում:

ԿՓ հարմարվողականությանն ուղղված ծախսերի գերակշիռ մասը կենտրոնացած է չորս ոլորտում՝ Բնակավայրեր, ենթակառուցվածքներ և էներգետիկա (28.5%), Ջրային ռեսուրսներ (22.6%), Մարդու առողջություն (17.7 տոկոս) և Գյուղատնտեսություն (14.2%): Այս բաշխումը արտացոլում է պետական բյուջեի առաջնահերթությունը կլիմայական ռիսկերին արձագանքման միջոցառումներում:

Գծապատկեր 8. ԿՓ հարմարվողականության ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏԶՀԿ հաշվարկներ

ԿՓ առնչվող միջոցառումներն ըստ կլիմայի փոփոխությանն առնչության մակարդակների դասակարգվում են չորս խմբերում՝ ուղղակի, բարձր, միջին և ցածր առնչություն ունեցողների:

Ուղղակի առնչության բյուջետային միջոցառումները դրանք կլիմայի փոփոխության ոլորտում քաղաքականությունը սահմանող փաստաթղթերում ընդգրկված կամ ԿՓ նպատակադրումներով բյուջետային ծրագրերում ընդգրկված միջոցառումներն են: Այսպիսիք թվով 52-ն են: Այս միջոցառումների շրջանակներում կլիմայական ծախսերը հաշվում են ընդամենը գնահատված կլիմայական ծախսերի 28.9 տոկոսը կամ 54.6 մլրդ դրամ:

Կլիմայական ծախսերի 40.5 տոկոսը կամ թվով 49 միջոցառում հանդիսանում են ԿՓ բարձր առնչություն ունեցող միջոցառումներ: Այս միջոցառումների գծով կլիմայական ծախսերը կազմում են 76.6 մլրդ դրամ: Համապատասխանաբար, միջին առնչություն ունեցող կամ կլիմայական չափավոր օգուտներ ապահովող միջոցառումների կլիմայական ծախսերը կազմում են կլիմայական բյուջեի 1.7 տոկոսը, իսկ ցածր առնչություն ունեցող կամ կլիմայական ցածր օգուտներ ապահովողներինը՝ 28.9 տոկոսը:

Աղյուսակ 2. 2025 թվականի ԿՓ առնչվող միջոցառումների բաշխումն ըստ առնչության մակարդակի

Առնչության մակարդակ	Միջոցառումների քանակ		Կլիմայական ծախսեր	
	հատ	տոկոս	մլրդ դրամ	տոկոս
Ուղղակի առնչություն	52	30.1	54.6	28.9
Բարձր առնչություն	49	28.3	76.6	40.5
Միջին առնչություն	9	5.2	3.2	1.7
Ցածր առնչություն	63	36.4	54.7	28.9
Ընդամենը	**173**	**100.0**	**189.0**	**100.0**

Աղբյուրը՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏՋՀԿ հաշվարկներ

Կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանն առնչվող բյուջետային ծախսերում էական է արտաքին ֆինանսավորման դերը:

Կլիմայական ծախսերի 36.0 տոկոսը կամ 68.0 մլրդ դրամն իրականացվում է արտաքին աջակցությամբ իրականացվող բյուջետային միջոցառումների շրջանակներում: Մասնավորապես, 20.7 տոկոսն իրականացվում է նպատակային դրամաշնորհների, իսկ 79.3 տոկոսը՝ նպատակային վարկերի միջոցներով:

Կլիմայի փոփոխությանն առնչվող բյուջետային միջոցառումների արտաքին ֆինանսավորումն իրականացնող հիմնական գործընկեր կազմակերպություններն են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Գերմանիայի զարգացման վարկերի բանկը, Զարգացման ֆրանսիական գործակալությունը, Եվրոպական ներդրումային բանկը և Ասիական զարգացման բանկը:

Գծապատկեր 9. 2026 թվականի կլիմայական ծախսերի ֆինանսավորման աղբյուրները, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին օրենք, ՏՋՀԿ հաշվարկներ

2025 ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2025 և 2026 թվականների կլիմայական ծախսերի համեմատական վերլուծությունն իրականացվել է համադրելի շրջանակով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2025 թվականին կլիմայական բյուջետային նշագրումը փորձարկվել է միայն ընտրված պետական մարմինների բյուջետային ծրագրերի նկատմամբ: Այդ պատճառով համեմատությունը ներառում է միայն 2025 թվականին ԿԲՆ գործընթացում ներգրավված հինգ պետական գերատեսչությունները: Այդ գերատեսչություններն են՝ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ Վարչապետի աշխատակազմը և ՀՀ Ֆինանսների նախարարությունը:

Աղյուսակ 3-ի տվյալները ցույց են տալիս, որ դիտարկվող պետական հինգ մարմինների շրջանակում կլիմայական ծախսերը 2026 թվականին կազմել են 129.6 մլրդ դրամ, ինչը 9.4 տոկոսով ավել է 2025 թվականի 118.5 մլրդ դրամի համեմատ: Միաժամանակ, այդ ծախսերի կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում աճել է 3.4 տոկոսից մինչև 3.6 տոկոս:

Գերատեսչական կտրվածքով դիտարկման դեպքում կլիմայական ծախսերի աճ է արձանագրվել ՏԿԵՆ-ում՝ 82.6 մլրդ դրամից մինչև 94.0 մլրդ դրամ (13.8 տոկոս), ինչպես նաև ՇՄՆ-ում՝ 12.9 մլրդ դրամից մինչև 13.7 մլրդ դրամ (5.8 տոկոս): ԷՆ դեպքում արձանագրվել է կլիմայական ծախսերի նվազում՝ 22.9 մլրդ դրամից մինչև 21.9 մլրդ դրամ (4.3 տոկոս):

Աղյուսակ 3. Կլիմայական ծախսերի կառուցվածքը 2025 և 2026 թվականներին ըստ պետական մարմինների

Պետական մարմին	***ԿՓ առնչվող ծախսեր, մլրդ դրամ***		***2026/2025 փոփոխություն, տոկոս***
	2025	**2026**	
ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	12.9	13.7	5.8
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	82.6	94.0	13.8
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	22.9	21.9	-4.3
ՀՀ վարչապետի աշխատակազմ	0	0	0
ՀՀ ֆինանսների նախարարություն	0	0	0
Ընդամենը ընտրված մարմիններ	**118.5**	**129.6**	**9.4**
Կշիռը բյուջեի ընդամենը ծախսերում, տոկոս	**3.4**	**3.6**	**-**
Այլ մարմիններ	*	**59.4**	-
Ընդամենը	*	**189.0**	-
Կշիռը ընդամենը պետական բյուջեի ծախսերում, տոկոս	*	**5.2**	-

Աղբյուրը՝ ՀՀ 2025 և 2026 թվականների պետական բյուջեի մասին օրենքներ, ՏՋՀԿ հաշվարկներ

*-2025թ. գնահատված չեն

2025 և 2026 թվականներին կլիմայական ծախսերի կառուցվածքն ըստ կլիմայի փոփոխությանն արձագանքման ուղղությունների էականորեն չի փոխվել: Երկու տարիներին էլ գերակշռում են հարմարվողականությանն ուղղված ծախսերը:

Միևնույն ժամանակ, 2026 թվականին դիտվում է հարմարվողականությանն ուղղված ծախսերի թե՛ հարաբերական, թե՛ բացարձակ արտահայտությամբ աճ, և մեղմման ուղղությամբ ծախսերի նվազում, ինչը վկայում է, որ կլիմայական քաղաքականության ծախսային շեշտադրումը կենտրոնանում է կլիմայական ռիսկերի հետևանքներին արձագանքման և դիմակայունության բարձրացման վրա:

Գծապատկեր 10. 2025 և 2026 թվականների կլիմայական ծախսերն ըստ կլիմայի փոփոխությանն արձագանքման ուղղությունների



Աղբյուրը՝ ՀՀ 2025 և 2026 թվականների պետական բյուջեի մասին օրենքներ, ՏԶՀԿ հաշվարկներ

2026 թվականին հարմարվողականությանն ուղղված կլիմայական ծախսերի աճը հիմնականում նկատելի է ջրային ռեսուրսների կառավարման, գյուղատնտեսության հարմարեցման, համայնքային ջրամատակարարման և ոռոգման համակարգերի արդիականացման, ինչպես նաև մարզային և ազգային ենթակառուցվածքների (հատկապես Սիսիան-Քաջարան ճանապարհային հատվածների) դիմակայունության բարձրացման ուղղություններով: Ավելացվել են նաև միջոցառումներ ուղղված Սևանա լճի ավազանի հողային ռեսուրսների և արժեքավոր էկոհամակարգերի պահպանությանը և կայուն կառավարմանը: Ուշադրության արժանի է նաև Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP 17) կազմակերպումն ու անցկացումը Հայաստանում, որը կբարելավի երկրի միջազգային ներգրավվածությունը և կաջակցի կլիմայական օրակարգի իրականացրմանը՝ որպես հարմարվողականությանն ուղղված քաղաքականության կարևոր բաղադրիչ:

Միաժամանակ, 2026 թվականին մեղմման ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է ֆինանսավորման կառուցվածքային փոփոխություններով: Նվազել են անտառվերականգման և անտառպահպանման, Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների նորոգման և կառուցման, քաղաքային լուսավորության, բուսաբանական այգու և անտառպուրակի կառուցապատման միջոցառումներին ուղղված ռեսուրսները: Փոխարենը ավելացել են էներգաարդյունավետության բարելավման ծրագրերին, ներառյալ մանկապարտեզների, հանրային շենքերի և բնակարանների

էներգաարդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանների կառուցմանն ուղղված ֆինանսավորման ծավալները:

2025 և 2026 թվականներին կլիմայական ծախսերի բաշխումը՝ ըստ ԿՓ առնչության մակարդակների, ևս էական կառուցվածքային փոփոխություններ չի կրել: Երկու տարիներին էլ գերակշռում են ուղղակի և բարձր առնչություն ունեցող ծախսերը, որոնք միասին կազմում են կլիմայական ծախսերի ավելի քան 90 տոկոսը, ինչը վկայում է, որ կլիմայական ծախսերը հիմնականում ներառում են այնպիսի միջոցառումներ, որոնց կապը կլիմայի փոփոխության հետ համեմատաբար հստակ է ձևակերպված:

Աղյուսակ 4. 2025 և 2026 թվականների ԿՓ առնչվող ծախսերի բաշխումն ըստ առնչության մակարդակների

Առնչության մակարդակ	2025		2026	
	մլրդ դրամ	տոկոս	մլրդ դրամ	տոկոս
Ուղղակի առնչություն	46.9	39.6	54.6	42.1
Բարձր առնչություն	59.5	50.2	62.5	48.2
Միջին առնչություն	3.5	2.9	3.2	2.4
Ցածր առնչություն	8.6	7.3	9.4	7.2
Ընդամենը	**118.5**	**100.0**	**129.6**	**100.0**

Աղբյուրը՝ ՀՀ 2025 և 2026 թվականների պետական բյուջեի մասին օրենքներ, ՏԶՀԿ հաշվարկներ

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. 2026 թվականի կլիմայական ծախսերի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում 5

Գծապատկեր 2. 2026 թվականի ԿՓ առնչվող բյուջետային միջոցառումների կշիռը ընդամենը բյուջետային միջոցառումներում 5

Գծապատկեր 3. 2026 թվականի կլիմայական ծախսերի կառուցվածքն ըստ պետական մարմինների, տոկոս 7

Գծապատկեր 4. 2026 կլիմայական ծախսերի կշիռը պետական մարմնի ընդամենը ծախսերում, տոկոս 7

Գծապատկեր 5. 2026 թվականի կլիմայական ծախսերն ըստ կլիմայի փոփոխությանն արձագանքման ուղղությունների 7

Գծապատկեր 6. 2026 թվականի կլիմայական ծախսերն ըստ կլիմայի փոփոխությանն արձագանքման ուղղությունների 8

Գծապատկեր 7. ԿՓ մեղմման ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների, տոկոս 8

Գծապատկեր 8. ԿՓ հարմարվողականության ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների, տոկոս 9

Գծապատկեր 9. 2026 թվականի կլիմայական ծախսերի ֆինանսավորման աղբյուրները, տոկոս 10

Գծապատկեր 10. 2025 և 2026 թվականների կլիմայական ծախսերն ըստ կլիմայի փոփոխությանն արձագանքման ուղղությունների 12

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. ԿԲՆ ամփոփ ցուցանիշներ 6

Աղյուսակ 2. 2025 թվականի ԿՓ առնչվող միջոցառումների բաշխումն ըստ առնչության մակարդակի 10

Աղյուսակ 3. Կլիմայական ծախսերի կառուցվածքը 2025 և 2026 թվականներին ըստ պետական մարմինների 11

Աղյուսակ 4. 2025 և 2026 թվականների ԿՓ առնչվող ծախսերի բաշխումն ըստ առնչության մակարդակների 13

ՀԱՎԵԼՎԱԾ 1. 2026 թվականի ԿՓ առնչություն ունեցող ծախսերի բաշխումն ըստ քաղաքականության ոլորտների և ուղղությունների

ԿՓ արձագանքման ուղղություն/ Քաղաքականության ոլորտ	Քաղաքականության ուղղություն	Կլիմայական բյուջե	
		մլն դրամ	տոկոս
Մեղմում		**49,901.7**	**100.0**
Գյուղատնտեսություն	Անասուններ	492.4	1.0
Էներգետիկա	Արտանետումային ցածր հզորություն	828.0	1.7
	Էներգիայի փոխանցում և բաշխում	2,070.4	4.1
	Վերականգնվող էներգիա	53.3	0.1
Թափոններ	Կոշտ թափոնների կառավարում և վերամշակում	338.4	0.7
Խաչվող հարցեր	Քաղաքականություն և կարգավորում	23.0	0.0
Կառուցված միջավայր	Հանրային ծառայություններ	514.5	1.0
	Շենքեր	39,870.0	79.9
Հողօգտագործում և անտառտնտեսություն	Անտառային տնտեսություն	1,401.5	2.8
Տրանսպորտ	Միջքաղաքային տրանսպորտ	185.2	0.4
	Քաղաքային տրանսպորտ	4,125.0	8.3
Հարմարվողականություն		**139,109**	**100.0**
Բնական էկոհամակարգեր և կենսաբազմազանություն	Անտառներ	6,890.6	5.0
	Բնական կենսավայրերի պաշտպանություն	768.8	0.6
	Պաշտպանություն անապատացումից	2,197.2	1.6
Բնակավայրեր, ենթակառուցվածքներ և էներգետիկա	Շենքեր	4,425.0	3.2
	Ջրհեղեղներից պաշտպանության ենթակառուցվածքներ	423.7	0.3
	Տրանսպորտ - հաղորդակցության բարելավում	34,447.1	24.8
	Տրանսպորտ - վտանգների նվազեցում	331.5	0.2
Գյուղատնտեսություն	Անասուններ	1,322.0	1.0
	Բուսաբուծություն և մշակաբույսերի պաշտպանություն	14,234.9	10.2
	Գյուղատնտեսական արտադրանքի վրա հիմնվող գյուղական համայնքների կենսապահովման աջակցություն	2,101.3	1.5
	Ջրի օգտագործման արդյունավետության բարձրացում	2,118.1	1.5
Զբոսաշրջություն	Էկոտուրիզմ	435.0	0.3
Խաչվող հարցեր	Աղետների ռիսկի կառավարում	9,122.1	6.6
	Կրթություն և իրազեկում	31.9	0.0
	Հետազոտություն	1,214.3	0.9
	Քաղաքականություն և կարգավորում	2,999.4	2.2
Մարդու առողջություն	Առողջապահական ընդհանուր ծախսեր	3,158.7	2.3
	Կլիմայի հետ կապված առողջապահական միջոցառումներ	21,471.6	15.4
Ջրային ռեսուրսներ	Դրենաժ	195.0	0.1
	Ոռոգման ապահովում	22,726.7	16.3
	Ջրամատակարարման և ջրահեռացման ապահովում	7,099.7	5.1
	Ջրային ռեսուրսների կառավարում	1,394.9	1.0

ՀԱՎԵԼՎԱԾ 2. 2026 թվականի ԿՓ առնչություն ունեցող ծախսերի նշագրման շրջանակը (տվյալների բազան)

Ներկայացված է կից Excel ֆայլով: